ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 23

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

08.04.2017թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 30-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 2017-2018 ուստարվա հեռակա ուսուցման ընդունելության մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկումը:
/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/
2. 2016-2017 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության մասին:
/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/
3. ԵՊՀ ԻՄ -ի պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերի հաստատումը :
/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/
4. ԵՊՀ ԻՄ -ի մեթոդական խորհրդի կանոնակարգի (նոր խմբագրությամբ) հաստատումը:
/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/
5. ԵՊՀ ԻՄ -ի ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգի (նոր խմբագրությամբ) հաստատումը:
/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/

6. Ընթացիկ հարցեր:

6.1. ԵՊՀ ԻՄ -Ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վահան Աղաբաբյանի ‹‹Հայ մատենագրություն›› ուսումնաօժանդակ ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:

6.2. ԵՊՀ ԻՄ- ի գիտական խորհրդի կազմում փոփոխություններ կատարելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ ‹‹2017-2018 ուստարվա հեռակա ուսուցման ընդունելության մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկումը›› հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա տեղեկացրեց, որ մասնաճյուղում կան որոշ մասնագիտություններով դիմորդների սակավություն: Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ մասնագիտությունների ընտրության հարցը շատ կարևոր և լուրջ խնդիր է, և կատարվել են լուրջ ուսումնասիրություններ, ինչպես նաև հաշվի են առնվել շրջանավարտների, արտաքին շահեկիցների և ուսանողության շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցումները, որոնք հիմք ընդունելով ներկայացնում ենք հետևյալ ցանկը (հավելված 1): Մասնավորապես նշվեց, ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հեռակա ուսուցմամբ առկա է տարրական մանկավարժություն և մեթոդիկա, պատմություն, ֆինանսներ (ըստ ոլորտի), հոգեբանություն, բնապահպանություն և բնօգտագործում, քարտեզագրություն և կադաստրային գործ, ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա, զբոսաշրջություն կրթական ծրագրերով դիմորդների անհրաժեշտ քանակություն: Նա նշեց, որ վարձավճարների չափը որոշելիս հաշվի է

առնվել այն հանգամանքը, որ մեր ուսանողների մոտ 95 տոկոսը Տավուշի մարզից է, որոնց 20 տոկոսը սահմանամերձ գոտուց են:

Արտահայտվեցին – Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը, տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանը, հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Զուրաբյանը:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին տնօրենի առաջարկին՝ հեռակա ուսուցմամբ կատարել ընդունելություն համաձայն հավելված 1-ի:

Որոշեցին

Որոշում 23/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 10-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 10-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հեռակա ուսուցման բակալավրիատի 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Ցանկը ուղարկել ԵՊՀ հաստատման:

Օրակարգի երկրորդ՝ «2017-2018 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության մասին» լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ այս տարի ևս ԵՊՀ մագիստրատուրայում նախատեսվում է մասնաճյուղի ուսանողներին հատկացնել որոշակի քանակով անվճար տեղեր, բացի այդ

ամենուր նվազել է վճարովի մագիստրատուրա սովորողների թիվը: Մյուս կողմից ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս տարի մագիտրատուրա հավանական դիմորդների քանակը մասնաճյուղ շատ քիչ է բավարար լինելուց, և կարող լրացուցիչ ֆինանսական բեռ դառնալ ԵՊՀ ԻՄ-ի համար:

Արտահայտվեցին – Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի վարիչ Ա. Ներսիսյանը, ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը: Արտահայտվողները շեշտեցին, որ մագիստրատուրա պետք է դիմեն միայն գիտահետազոտական գործունեությամբ զբաղվողները, որոնք մեծ թիվ չեն կազմում, ինչպես նաև կարևորեցին մագիստրատուրան ԵՊՀ –ում սովորելու անհրաժեշտությունը:

Որոշեցին

Որոշում 23/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 3-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ ԻՄ –ում 2017-2018 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելություն չկազմակերպել:
2. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Օրակարգի երրորդ՝</u> «ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերի հաստատումը» հարցի վերաբերյալ լսվեց տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը:

Տնօրենը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նոր նորմերի ընդունման անհրաժեշտությունն առաջացել է ԵՊՀ –ի կողմից հաշվարկի նորմերում կատարված փոփոխությունից հետո: Նա նշեց, որ այդ փոփոխությունները մանրամասն քննարկվել է վերջին տնօրինության նիստում և ամփոփ ներկայացված է հավելված 2-ում:

Արտահայտվեցին – ՈՒՄՎ պետ Ա.Ց. Դավթյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը և այլոք:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին ներկայացված նախագծին և առաջարկեցին հաստատնել ներկայացված նախագիծը:

Որոշեցին

Որոշում 23/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի առկա և հեռակա ուսուցման ուսումնական աշխատանքի հաշվարկի նորմերը համաձայն հավելված 2-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի չորրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդի կանոնակարգի (նոր խմբագրությամբ) հաստատումը» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ -ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Տնօրենը նշեց, որ ԵՊՀ ԻՄ -ի մեթոդական խորհուրդը տնօրենին կից խորհրդակցական

մարմին է, որի գործունեությունն ուղղված է ԵՊՀ ԻՄ-ում տարվող ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների պատշաճ իրականացմանը, իսկ սույն կանոնակարգը սահմանում է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի մեթոդական խորհրդի իրավասությունը, ձևավորման և աշխատանքի կազմակերպման կարգը: Նա նշեց, որ ներկայացված կանոնակարգի համար հիմք է հանդիսացել ԵՊՀ–ի համապատասխան կանոնակարգը և հաշվի է առնվել մասնաճյուղի առանձնահատկությունները:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշվեց, որ ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդի խնդիրներն են՝

1) ԵՊՀ ԻՄ-ի զարգացման ռազմավարական ծրագրի կրթական խնդիրների իրականացման մշտադիտարկումը,

2)ֆակուլտետային մեթոդական խորհուրդների աշխատանքների մշտադիտարկում,

3)ուսումնական գործընթացի կազմակերպումը կանոնակարգող ներմասնաճյուղային իրավական ակտերի մշակումն ու վերանայումը,

4) կրթական ծրագրերի քննարկումը,

5) բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության պլանավորումը,

6) դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների և ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների մշտադիտարկումը,

7) ԵՊՀ ԻՄ-ի ներքին իրավական ակտերով սահմանված և ԵՊՀ ԻՄ-ի հիմնական գործունեության հետ կապված այլ խնդիրների իրականացումը:

Արտահայտվեցին – ՈՒՄՎ պետ Ա.Ց. Դավթյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը և այլոք:

Ելույթ ունեցողները հույս հայտնեցին նոր խմբագրությամբ կանոնակարգը կնպաստի նոր ձևավորվելիք մեթոդական խորհրդի

աշխատանքների արդյունավետության վրա: Նրանք դրական գնահատեցին կատարված աշխատանքը և առաջարկեցին հաստատել նախագիծը առանց փոփոխությունների:

Որոշեցին

Որոշում 23/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի մեթոդական խորհրդի կանոնակարգը՝ համաձայն հավելված 3-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել 2012թ. սեպտեմբերի 17-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի մեթոդական խորհրդի կանոնակարգը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի հինգերորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգի (նոր խմբագրությամբ) հաստատումը» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ -ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Տնօրենը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի ֆակուլտետի մեթոդական խորհուրդը ֆակուլտետի դեկանին կից խորհրդակցական մարմին է, որի գործունեության նպատակն է նպաստել ֆակուլտետում տարվող

ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների պատշաճ իրականացմանը և նրա հիմնական խնդիրներն են

1) կրթական ծրագրերի, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի արդիականացումն ու համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջներին,

2)ուսումնական գործընթացի կազմակերպմանն, դասավանդման և ուսումնառության մեթոդներին առնչվող հարցերի քննարկումը,

3) գիտելիքների ստուգման և գնահատման կիրառվող մոտեցումների քննարկումը,

4) պրակտիկաների արդյունավետության բարձրացման մեխանիզմների մշակումը և մշտադիտարկումը,

5) ուսումնամեթոդական աշխատանքների երաշխավորումը,

6) դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների և ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների արդյունքների քննարկումը,

7) ԵՊՀ ԻՄ-ի ներքին իրավական ակտերով սահմանված և ԵՊՀ ԻՄ –ի հիմնական գործունեության հետ կապված այլ խնդիրների իրականացումը:

Արտահայտվեցին – ՈՒՄՎ պետ Ա.Ց. Դավթյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկան Ա. Մարգարյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ Ա. Ցուցուլյանը:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին նոր խմբագրությամբ կանոնակարգին և առաջարկեցին հաստատել նախագիծը առանց փոփոխությունների:

Որոշեցին

Որոշում 23/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի մեթոդական խորհրդի կանոնակարգը՝ համաձայն հավելված 4-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել 2005թ. մարտի 18-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ընթացիկ հարցեր:

Լսեցին – ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վահան Աղաբաբյանի «Հայ մատենագրություն» ուսումնաօժանդակ ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:

ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանը նշեց, որ <<Հայոց լեզվի և գրականության >> ամբիոնի նիստով որոշում է կայացվել դիմել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վ. Աղաբաբյանի «Հայ մատենագրություն» ուսումնաօժանդակ ձեռնարկը հրատարակության երաշխավորելու համար: Ձեռնարկը գրախոսվել է ամբիոնի առաջատար մասնագետների կողմից և արժանացել է բարձր գնահատականի:

Արտահայտվեցին -- Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ. Ավագյանը, բ.գ.թ. Ա. Սարհատյանը, , բ.գ.թ. Մ. Սարուխանյանը և այլոք :

Նշվեց, որ Վ. Աղաբաբյանի ձեռնարկը ներառվում է վերոհիշյալ դասընթացի էական կողմերը և համապատասխանում է կրեդիտային համակարգով ուսումնառության թեմատիկ չափանիշներին: Ձեռնարկում ներկայացվում են հայ մատենագրության, հայ պարբերական մամուլի սկզբնավորման նախադրյալները, հայ պարբերական մամուլի և գրատպության ստեղծման ու զարգացման պատմությունը: Ձեռնարկը նախատեսված է բակալավրի կրթական ծրագրով սովորող բանասեր ուսանողների, այդ բնագավառի մասնագետների, ինչպես նաև հայ մատենագրությամբ հետաքրքրվող յուրաքանչյուրի համար:

Որոշեցին

Որոշում 23/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 13-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել հրատարակման ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վ. Աղաբաբյանի ‹‹Հայ մատենագրություն›› ուսումնաօժանդակ ձեռնարկը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Լսեցին – ԵՊՀ ԻՄ- ի գիտական խորհրդի կազմում փոփոխություններ կատարելու մասին հարցը:

Էջ **10**, **11**-ից

Որոշեցին

Որոշում 23/7

Հաստատել ԵՊՀ ԻՄ -ի գիտական խորհրդի փոփոխված կազմը համաձայն հավելված 5-ի:

Գիտական խորհրդի նախագահ_____ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար_____Մ.Ս. ԱԹՈՅԱՆ

08.04.2017թ.